հարկաւոր տեղիս համահաւասարութեամբ քանակութեան անձանց ըստ իւրաքանչիւր ժողովրդոց համեմատութեամբ 'ի մէջ ամուր պարբսպաց, և երկու տարէն կերակուր 'ի մէջ քաղաքաց, գաւառաց և գեօղերայից, որ բոլորն լինի կերակուր երից ամաց, եթէ աւելի քան զայս և պակաս ազդ մեզ առնել, և նոյն գունակ յարդ և գարի և կորեկ և այլն, վասն անասնոց, և որում դաշտ աշխարհի և գաւառի, որ 'ի ժամանակի իշխանութեան քոյ ծնանի նորագոյթ բոյս և առատասցի պատուելի քեզ առնէ մէնջ տանն հայոց, գրուեցաւ 'ի դրունս և այլն։

Վկայեմք, որ ձեռնադրեցին, կնքեցին և յանձնեցին.

Մ. Ի. ○
Մ. Գ. ○

Ս. Տ. ○
Վ. Տ. ○
Գ. Տ. ○

Օրինակ նամակի Գանձապետութեան։

ԳԼՈՒԽ ՀԱ.

Տեսանելով մեր ընդունելութիւն կորճակայ հայկա և թուղթ փոխանորդութեան նոցայ ընդ քեզ, և 'ի վերայ երդման քոյ հաստատեցաք 'ի միտս մեր հաւատարիմ լինիլ 'ի տանն հայոց, տուաք քեզ նամակ Շնորհաց և պաշտօնի գան-